

**«Գնումների մասին» ՀՀ օրենքում լրացում  
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի  
վերաբերյալ ՀՀ կառավարության  
առաջարկության նախագծի մասին**



**HOVHANNISYAN**  
& PARTNERS

**ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Գնումների կազմակերպման գործընթացում պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները սահմանվում և կարգավորվում են 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) (ստորագրվել է 14.01.2017թ., ուժի մեջ է մտել 25.04.2017թ.):

**ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Առաջարկվում է** «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3.1 և 3.2 մասերով՝

«3.1. Խորհրդի կողմից ընդունված սույն օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

3.2 Խորհրդի կողմից ընդունված սույն օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված




**Հայկ Հովհաննիսյան**

Կառավարող գործընկեր, Ի. Գ. Թ.

Հեռ.՝ +374 91 403601  
+374 60 740740

Էլ-փոստ՝  
[hayk.hovhannisyana@hap.am](mailto:hayk.hovhannisyana@hap.am)



**Աննա Մարգարյան**

Փաստաբան

Հեռ.՝ +374 99 890050  
+374 60 740740

Էլ-փոստ՝  
[anna.margaryan@hap.am](mailto:anna.margaryan@hap.am)

*Գնումների օրենսդրության  
հետ կապված լրացուցիչ  
հարցերի դեպքում դիմեք մեզ*

որոշումների դեմ բողոք կարող է տարվել դատարան, մինչև այդ որոշումների ուժի մեջ մտնելը»:

**Առաջարկվող փոփոխություններն ուղղված են լրացնելու վկայակազմած օրենքում առկա բացը, մասնավորապես.**

Սահմանվել է Չնումների Բողոքարկման Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից մասնակցին զնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ, որը պրակտիկայում օրինական ուժ է ստանում անմիջապես հրապարակվելու պահից:

Վերոնշյալ բացն առաջացնում է մի շարք խնդիրներ, որոնցից մեկը հանդիսանում է մասնակցի՝ այլ զնումների գործընթացներին մասնակցելու իրավունքի սահմանափակումը անկախ այն հանգամանքից, թե մասնակցի կողմից այդ որոշումը բողոքարկվում է դատական կարգով, թե ոչ:

Ուստի նման փոփոխություն պայմանավորված է ապահովելու մասնակիցների կողմից Խորհրդի՝ մասնակցին զնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշման դեմ դատական կարգով բողոք ներկայացնելու իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքից օգտվելու դեպքում վերջիններիս համար անբարենպաստ հետևանքների առաջացման կանխումը:

Որոշման ուժի մեջ մտնելու ժամկետի սահմանմամբ որոշակիություն է հաղորդվում և ստեղծում է հնարավորություն բացառելու վնասների կրումը մասնակցի կողմից՝ ընձեռնվով վերջինիս հնարավորություն Խորհրդի որոշումը դատական կարգով բողոքարկելու, որի արդյունքում կարող է այն վերացվել:

Հակառակ իրավակարգավորման պայմաններում մինչև մասնակիցը կկարողանա վերականգնել իր խախտված իրավունքը, վերջինս կկրի վնասներ՝ բողոքարկման ընթացքում այլ զնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունենալու հետևանքով:

Վերոգրյալից ելնելով ակնհայտ է, որ ժամկետի սահմանմամբ ավելի հստակ են դառնում որոշումների բողոքարկման կարգը և մասնակցին հնարավորություն է ընձեռնվում լիարժեք օգտվել իր դատական պաշտպանության իրավունքից՝ ունենալով այլ զնումներին մասնակցելու հնարավորություն մինչև ներկայացված բողոքի վերջնական լուծումը, այլ կերպ ասած Խորհրդի որոշումը անմիջապես իր ազդեցությունը չի ունենա մասնակցի վրա, քանի դեռ վերջինս օգտվում է իր դատական պաշտպանության իրավունքից և առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: